

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 36/11

ք.Երևան

26 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.05.2018թ. N 0354 որոշման դեմ «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՀՎ ՀՏ-վարչության պետի 19.02.2018թ. թիվ 4100165 հանձնարարագրով «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերություն) Աշտարակի խճուղի 6 հասցեում գտնվող հանրային սննդի կետում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 06.04.2018թ.-ին կազմվել է թիվ 4100165 ակտը:

Համաձայն ակտի «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ-ին առաջադրվել է վճարել տուգանք՝ 300.000 դրամի չափով և այդ վայրում ձեռնարկատիրական գործունեության կասեցում՝ 5 օրով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.04.2018թ. թիվ 0272-18 որոշման համաձայն, «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ Կոտայքի մարզ, Աշտարակի խճուղի 6 հասցեում իրականացվող հանրային սննդի գործունեությունը նախատեսվել է կասեցնել 18.04.2018թ. մինչև 22.04.2018թ. ներառյալ:

Ստանալով հարկային մարմնի որոշումը՝ ընկերությունը, օրենքի տառին համապատասխան, միջոցներ է ձեռնարկել, այն է՝ մինչև գործունեության կասեցումը, կասեցման ենթակա գործունեության վայրի տարածքում գտնվող շուտ փչացող ապրանքներն առաքիչների միջոցով հեռացրել է:

Ինչ վերաբերում է հարկային մարմնին, ապա վերջինս դրսևորել է անգործություն՝ չկատարելով օրենքով իր վրա դրված պարտականությունները: Այսինքն՝ վարչական մարմինը կայացրել է վարչական ակտ, սակայն չի կատարել տվյալ դեպքում օրենքով իր վրա դրված ընթացակարգային պարտականությունները:

ՀՀ հարկային օրենսգրքի 384-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ և 10-րդ մասերի դրույթներից կարելի է եզրակացնել, որ ըստ էության վարչական ակտի գործողության ժամկետն ավարտվել է:

Սակայն վարչական ակտի կայացումից շուրջ մեկ ամիս հետո՝ 13.05.2018թ., ընկերությունը ստացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.05.2018թ. թիվ 0354 որոշումը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.04.2018թ. թիվ 0272 որոշմամբ սահմանված գործունեության կասեցման ժամկետների փոփոխության վերաբերյալ, համաձայն որի՝ «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ-ի գործունեության կասեցման վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.04.2018թ. թիվ 0272 որոշման մեջ կասեցման ժամկետներում կատարվել է հետևյալ փոփոխությունը՝ «18.04.2018թ.-22.04.2018թ.»-ը փոխարինվել է «18.05.2018թ.-22.05.2018թ.»-ով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.05.2018թ. թիվ 0354 որոշումն իրավաչափ չէ, քանի որ չի բխում գործող նորմատիվ իրավական ակտերի պահանջներից, հակասում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին և ոչ իրավաչափ պատասխանատվություն է սահմանում «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ համար: Այսպես.

Բողոքում բերված են ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 9-րդ, 53-րդ, 55-րդ հոդվածների դրույթները:

Մինչդեռ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.05.2018թ. թիվ 0354 որոշման մեջ ընդամենը հղում է կատարվել «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին, սակայն այն բոլոր էական փաստական ու իրավաբանական հանգամանքները, որոնք հիմք են տվել վարչական մարմնին արդեն իսկ ավարտված վարչական ակտը փոփոխել, ի սպառ բացակայում են:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր վարչական ակտը կարող է գործել անորոշ, կամ որոշակի ժամկետով:

Որոշակի ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է մինչև տվյալ ակտով նախատեսված ժամկետի լրանալը: Մինչև որոշակի ժամկետով ընդունված վարչական ակտի ժամկետը լրանալը կամ ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, այդ վարչական ակտի ժամկետը կարող է այլ վարչական ակտով երկարաձգվել նոր ժամկետով կամ անորոշ ժամկետով:

Տվյալ դեպքում հարկային մարմինը իր որոշումը կայացրել է 12.04.2018թ., 22.04.2018թ. լրացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի թիվ 0272/18 որոշման ժամկետը: Այսինքն՝ 22.04.2018թ. վարչական ակտն ավարտվել է, իսկ առաջին որոշումից գրեթե մեկ ամիս անց կայացվել է նոր որոշում, որով փոփոխվել է նախկին որոշման ժամկետը, այսինքն՝ ոչ թե օրենքի տառին համապատասխան, որոշմամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է նոր կամ անորոշ ժամկետով, այլ փաստացի սահմանվել է ընկերության գործունեության կասեցման նոր ժամկետ: Այսպիսով վարչական մարմինը խախտել է վարչարարության կարևորագույն սկզբունքները՝ կամայականության արգելքը, վարչարարության համաչափությունը, հայեցողական լիազորությունների չարաշահման արգելքը:

Բողոքում բերված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ, 8-րդ հոդվածների դրույթները:

Վարչական մարմնի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթների կամայական մեկնաբանումն ու սխալ կիրառումը հակասում է նաև 28.03.2018թ. ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 37-րդ հոդվածների, ՀՀ հարկային օրենսգրքի 384-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ վարչական մարմինը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.05.2018թ. թիվ 0354 որոշումը կայացրել է օրենքի խախտմամբ, ուստի այն ի սկզբանե անվավեր է և պետք է այդպիսին ճանաչվի վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից:

Բացի վերը նշվածը հարկ է նշել նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.05.2018թ. թիվ 0354 որոշումը հղում է կատարում «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքին (կոնկրետ հոդվածը նշված չէ): Այսինքն՝ վարչական մարմնի կողմից վկայակոչված օրենքի որևէ դրույթ չի նախատեսում վարչական մարմնի կողմից ավարտված վարչական ակտի կամայական փոփոխություն և

այդպիսով ընկերության նկատմամբ ոչ իրավաչափ գործողությունների կատարում:

Ելնելով վերը շարադրվածից՝ ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.05.2018թ. թիվ 0354 որոշումը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՀՎ ՀՏ-վարչության պետի 19.02.2018թ. թիվ 4100165 հանձնարարագրի համաձայն «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 06.04.2018թ. թիվ 4100165 ակտը, որով կիրառվել է ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ, որի դեպքում ընկերության գործունեությունը ենթակա է կասեցման 5 օրով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.04.2018թ. թիվ 0272-18 որոշման համաձայն, «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ Կոտայքի մարզ, Աշտարակի խճուղի 6 հասցեում իրականացվող հանրային սննդի գործունեությունը նախատեսվել է կասեցնել 18.04.2018թ. մինչև 22.04.2018թ. ներառյալ: Սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.04.2018թ. թիվ 0272 որոշման պահանջները փաստացի չեն կատարվել, այն է՝ 18.04.2018թ. մինչև 22.04.2018թ. ընկերության գործունեությունը չի կասեցվել:

Այնուհետև, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 08.05.2018թ. հրապարակվել է թիվ 0354 որոշումը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.04.2018թ. թիվ 0272 որոշմամբ սահմանված գործունեության կասեցման ժամկետների փոփոխության վերաբերյալ: Մասնավորապես, «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ-ի գործունեության կասեցման վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.04.2018թ. թիվ 0272 որոշման մեջ կասեցման ժամկետներում կատարվել է հետևյալ փոփոխությունը՝ «18.04.2018թ.–22.04.2018թ.»–ը փոխարինվել է «18.05.2018թ.–22.05.2018թ.»–ով:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հարկային մարմնի կողմից նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 300 հազար դրամից, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով:

Տվյալ դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 06.04.2018թ. թիվ 4100165 ակտով կիրառվել է ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված տուգանքը, որի դեպքում նախատեսված է նաև գործունեության կասեցում 5 օրով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 12.04.2018թ. կայացվել է թիվ 0272 որոշումը «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ Կոտայքի մարզ, Աշտարակի խճուղի 6 հասցեում իրականացվող հանրային սննդի գործունեությունը 18.04.2018թ. մինչև 22.04.2018թ. կասեցնելու վերաբերյալ: Սակայն նշված որոշման պահանջները փաստացի չեն կատարվել:

Այնուհետև, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 08.05.2018թ. կայացվել է թիվ 0354 որոշումը, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.04.2018թ. թիվ 0272-18 որոշմամբ սահմանված կասեցման ժամկետներում կատարվել է հետևյալ փոփոխությունը՝ «18.04.2018թ.-22.04.2018թ.»-ը փոխարինվել է «18.05.2018թ.-22.05.2018թ.»-ով:

Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.05.2018թ. թիվ 0354 որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը կարող է գործել անորոշ կամ որոշակի ժամկետով:

Անորոշ ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով կամ սույն օրենքով սահմանված կարգով անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել, կամ օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով դրա գործողությունը չի դադարեցվել:

Որոշակի ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է մինչև փվյալ ակտով նախատեսված ժամկետի լրանալը: Մինչև որոշակի ժամկետով ընդունված վարչական ակտի ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, այդ վարչական ակտի ժամկետը կարող է այլ վարչական ակտով երկարաձգվել նոր ժամկետով կամ անորոշ ժամկետով:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.04.2018թ. թիվ 0272-18 որոշմամբ ժամկետը սահմանվել է 18.04.2018թ. մինչև 22.04.2018թ.: Այսինքն, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.04.2018թ. թիվ 0272-18 որոշումը գործել է մինչև դրանով նախատեսված ժամկետի լրանալը՝ 22.04.2018թ.: Հետևապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.04.2018թ. թիվ 0272-18 որոշմամբ նախատեսված ժամկետը կարող էր այլ վարչական ակտով երկարաձգվել նոր ժամկետով մինչև 22.04.2018թ. կամ դրանից հետո՝ 15 օրվա ընթացքում: Սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի թիվ 0354 որոշումը կայացվել է 08.05.2018թ., ժամկետը լրանալուց հետո 16-րդ օրը:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.05.2018թ. N0354 որոշման դեմ «ԹՐԵՔ ԱՏՈՊ» ՍՊԸ դիմում-բողոքը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ